Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի փետրվարի 13-ի
N 110- Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի հիմնանորոգման

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված է Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների օգտագործման վերաբերյալ առաջարկությունները՝ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում կապիտալ ծախսերի ծրագրերի տեսքով, որոնց իրականացումը ուղղված է բնակչության խմելու և ոռոգման ջրի, համայնքային նշանակության ճանապարհների, մանկապարտեզների, ինչպես նաև այլ ենթակառուցվածքների հիմնախնդիրների լուծմանը:

Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի Նալբանդյան փողոց-Մաշտոցի պողոտա հատվածը շուրջ երկու տասնամյակ հիմնանորոգման չի ենթարկվել, ինչը դժվարություններ է առաջացնում փողոցային անվտանգ երթևեկության առումով, ինչպես նաև որոշակի դժվարություններ մայթերից օգտվողների պարագայում: Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի Մոսկովյան փողոցի վերոնշյալ հատվածն ամբողջովին հիմնանորոգել՝ այն համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և չափորոշիչներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել են Մոսկովյան փողոցի՝ Նալբանդյան փողոց-Մաշտոցի պողոտա հատվածի, հիմնանորգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, համաձայն որոնց, ընդհանուր աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 222,298.78 հազար դրամ, որն իր մեջ ներառում է նաև տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները:

Մոսկովյան փողոցի Նալբանդյան փողոց-Մաշտոցի պողոտա հատվածի հիմնանորգման աշխատանքների ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների շրջանակներում:

Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի Նալբանդյան փողոց-Մաշտոցի պողոտա հատվածի հիմնանորգման ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- Երթևեկելի հատվածի գոյություն ունեցող ասֆալտբետոնի ծածկի h=5սմ խորությամբ ֆրեզում,
- Մայթերի ծածկի քանդում (հատվածային),
- Խճային հիմքի տեղադրում h=8սմ ներծծված տաք բիտումի մածուծանով (հատվածային),
- Երթևեկելի մասի 10540 մ^2 ասֆալտբետոնի ծածկի իրականացում,
- Մուտքերի և իջատեղերի 1436 մ^2 ասֆալտբետոնի ծածկի իրականացում,
- Երթևեկելի մասի 1083 գծմ բազալտե նոր եզրաքարերի տեղադրում՝ 15x30 բետոնե հիմքով,
- Մայթերի 346 գծմ բազալտե նոր եզրաքարերի տեղադրում 10x20 սմ բետոնե հիմքով,
- Տոմետ սալիկների վերատեղադրում,
- Բազալտե եզրաքարերի վերատեղադրում,
- Թվով 28 դիտահորերի և թվով 6 թուջե հանգույցներով անձրևառրսիչների ուղղում,
- Թեքահարթակների վերակառուցում, այդ թվում՝ 6.67 մ^3 հարթակի երեսապատում 30 մմ բազալտե սալիկներով և նոր եզրաքարերի տեղադրում՝ 15x30 բետոնե հիմքով,

Ծրագրի իրականացման արդյունքում հնարավորություն կընձեռվի ամբողջական կարգավորել Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի կենսագործունեությունը: